

2011թ. ՀՀ կառավարության կողմից Սյունիքի մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին հատկացվել է 116տ. գարնանացան գարու առաջին վերարտադրության սերմացու, 103տ՝ գարնանացան գարու էլիտա սերմացու, 1տ՝ եգիպտացորենի սերմացու: Մասնավոր ֆերմերի կողմից մարզ է ներկրվել 13տ կարտոֆիլի տնկանյութ: Մկնանման կրծողների դեմ պայքար իրականացնելու համար 2011թ.մարզ է ներկրվել 2852կգ ցինկի ֆոսֆիդ տեսակի թունանյութ: Մարզում ազոտական պարարտանյութի պահանջարկը կազմել է 1500-1600տ: Մարզ է ներկրվել 1200տ: Ազոտական պարարտանյութի 500տ-ի չափով գյուղացուն աջակցել է ՀՀ Սյունիքի մարզպետը: 2012թ. համար ՀՀ գյուղատնտեսության նախարարություն հայտ է ներկայացվել մինչև 2500տ ազոտական պարարտանյութի պահանջարկ: